ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԾԱԾԿԻ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՂԵԱՆՑԵՐԻ ՀԵՆԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱՁԻԳ ՆՇԱԳԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-1»

ք. Երևան «21» դեկտեմբեր 2015թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ.Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գասպարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և կատարման ժամկետ է սահմանվում մինչև՝ 31.12.2020թ.-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 /երկու/ օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 /քառասուն/ օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 378 438 076 (երեք հարյուր յոթանասունութ միլիոն չորս հարյուր երեսունութ հազար յոթանասունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

- Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 276 924 701 (երկու հարյուր յոթանասունվեց միլիոն ինը հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր մեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 32 495 550 (երեսուներկու միլիոն չորս հարյուր իննսունհինգ հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

- Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 42 128 525 (քառասուներկու միլիոն հարյուր քսանութ հազար հինգ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

- Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 26 889 300 (քսանվեց միլիոն ութ հարյուր ութսունինը հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 2017 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է

---

[1] *Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կիրակացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը կլուծարվի, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվի:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները կազմված՝ 13 էջից, հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Ք. Երևան, Նալբանդյան 28	Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարանային 89
Կենտրոնական Գանձապետարան	«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/ճ
Հ/Հ 900011012136	Հ/Հ 2470200016540000
ՀԿՀՀ 02565518	ՀԿՀՀ 09700228
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«21» դեկտեմբեր 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-1
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների

I. Տեխնիկական պահանջներ

1. Ապահովել միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների և արհեստական կառույցների պահպանվածությունը այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ անվտանգ երթևեկության ապահովման պահանջներին:

2. Ապահովել սպասարկվող ճանապարհահատվածներին տրանսպորտի շուրջօրյա և անվտանգ երթևեկությունը համաձայն ճանապարհների պահպանման կանոնների:

3. Ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման պահանջներն են՝

- Ճանապարհների կոնստրուկտիվ տարրերի և երթևեկամասերում թույլ չտալ աղբի, ձյան և սառույցի առկայություն
- Ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում: Ուժեղ ձնաբքերի դադարելուց անմիջապես հետո սկսել և ոչ ավելի քան 4 ժամվա ընթացքում ավարտել ճանապարհների մաքրումը
- Մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին կիրառել աղի և ավազի ցանումը
- Աշխատանքների կատարման ընթացքում ապահովել երթևեկության անվտանգությունը
- Առատ ձյան տեղումների և ուժեղ ձնաբքերի ժամանակ, ճանապարհների մաքրման տեխնիկապես անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում,

ճանապարհների փակումն ու բացումը կատարել Պատվիրատուի և ավտոտեսչության տեղական մարմինների համաձայնությամբ

- Ստեղծել շուրջօրյա հերթապահություն, վարել տվյալների գրանցման մատյան և ամեն օր, ժամը 6-8-ը, 12-14-ը և 18-20-ը Պատվիրատուի հերթապահությանը տվյալներ հայտնել, տեղում եղանակի ու ճանապարհների վիճակի մասին:
- Սպասարկվող ավտոճանապարհների տարածքում ունենալ առնվազն մեկ ստացիոնար հենակետ՝ ապահոված հոսանքով, կապի միջոցներով բանվորների և մեխանիզատորների համար ջեռուցվող հանգստյան սենյակով:
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

4. Ընթացիկ ամառային («ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» ժամանակահատված) պահպանման և շահագործման պահանջներն են՝

- Ճանապարհների շահագործման և պահպանման կանոնների համաձայն ապահովել սպասարկվող ավտոճանապարհների հետևյալ կոնստրուկտիվ տարրերի պահպանվածությունը՝
  - Հողային պաստառ և օտարման շերտ
  - Երթևեկելի մաս
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

5. Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկման մակարդակները 2016թ. համար՝ համաձայն N 1.1 և N 1.2 հավելվածների:

II. Ձեռքբերման պայմաններ

1. Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է 5 տարի՝ 01.01.2016թ.-31.12.2020թ.:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
Ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/ճ
Հ/Հ 24702000165400000
ՀՎՀՀ 09700228

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1.1

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սանմանային արժեքները 2016 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 327,3-կմ384,3	Միջպետական II-IV	57,00		Լավ	57,00	565,714	32245,698
Մ17, Մ2-Կապան-Ծավ-Շվանիձոր-Մեղրի-Մ2 կմ40.8-կմ90.8	Միջպետական II-IV	50,00		Լավ	50,00	565,714	28285,700
Մոտեցում Նախիջևանի սահմանին Ագարակից կմ0-կմ 6,3	Միջպետական II-IV	11,00		Միջին	6,30	227,931	1435,965
Հ-49, Մ17-Նռնաձոր-ԼՂՀ սահման կմ0,0-կմ24.4	Հանրապետական II-IV	24,40		Միջին	24,40	227,931	5561,516
Հ82, Մ17-Մեղրի կմ0-կմ4,0	Հանրապետական II-IV	4,00		Լավ	4,00	245,410	981,640
Հ50, Մ2-Մեղրու օդանավակայան-Ագարակի կոմբինատ կմ0-կմ12,5	Հանրապետական II-IV	12,50		Միջին	12,50	227,931	2849,138
Ընդամենը		158,90			154,2		71359,657
Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ							
Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 327,3-կմ384,3	Միջպետական II-IV	57,00	Երաշխիք. Մե(0)	Լավ	4,30	498,780	2144,754
			Բավարար ՄԲ(II)	Միջին	48,50	1485,306	72037,341
Մ17, Մ2-Կապան-Ծավ-Շվանիձոր-Մեղրի-Մ2 կմ40.8-կմ90.8	Միջպետական II-IV	50,00	Լավ	Լավ	4	678,329	2713,316
			Բավարար ՄԲ(II)	Միջին	46,00	1485,306	68324,076
Մոտեցում Նախիջևանի սահմանին Ագարակից կմ0-կմ 6,3	Միջպետական II-IV	6,30	Բավարար ՄԲ(II)	Միջին	6,30	1485,306	9357,429
Հ82, Մ17-Մեղրի կմ 0-կմ 4.0	Հանրապետական II-IV	4,00	Լավ	Միջին	2,00	567,636	1135,272
			Բավարար ՄԲ(II)	Միջին	2,00	1385,482	2770,964
Հ-49, Մ17- Մեղրի-Նռնաձոր-ԼՂՀ սահման կմ0,0-կմ24.4	Հանրապետական II-IV	24,40	Բավարար ՄԲ(II)	Բավարար	24,40	1275,932	31132,742

Հ-50,Մ2-Մեղրու օդանավակայան-Ագարակի կոմբինատ կմ0-կմ12,5	Հանրապետական II-IV	12,50	Բավարար ՄԲ(II)	Բավարար	12,50	1275,932	15949,150
Ընդամենը		154,20			150,00		205565,044
					Ընդամենը Մեղրու տարածաշրջանով		276924,701

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
Ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/ճ
Հ/Հ 2470200016540000
ՀՎՀՀ 09709228

(ստորագրություն)

Հավելված N 1.2

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջան

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ

I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	605.781		
Լավ ՄԼ (I)	1111.584	1099.333	
Բավարար ՄԲ (II)		1631.841	1608.266

Հղ N 6. Աղյուսակ 6.1

II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	415.650		
Լավ ՄԼ (I)	565.274	555.369	
Բավարար ՄԲ (II)		1237.755	1220.744

II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	374.155		
Լավ ՄԼ (I)	489.258	473.030	
Բավարար ՄԲ (II)		1154.568	1063.278

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ծմեռային պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	**Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը**	**Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը**
I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ	**631.257**	**615.244**	**580.378**
II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ	**471.428**	**189.943**	**180.899**
II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոճանապարհներ	**204.507**	**189.943**	**180.899**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
Ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/ճ
Հ/Հ 2470200016540000
ՀՎՀՀ 09708128

(ստորագրություն)

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Աշխատանքի անվանումը - Հայաստանի Հանրապետության պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքներ

1.2. Նշանակությունը (խնդիրը) - Հայաստանի Հանրապետության պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծում

1.3. Հիմքը - Անվտանգության ապահովում

1.4. Ֆինանսավորման աղբյուրը - Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

1.5. Աշխատանքի կատարման ժամկետը - 2016թ.-ի հունվարի 1-ից մինչև 2020թ.- ի դեկտեմբերի 31-ը

1.6. Պատվիրատու - Հ Հ տրանսպորտի և կապի նախարարություն

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Ավտոմոբիլային ճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 13-Ն "Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոնները, ճանապարհային ցանկապատերին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները և ուղղորդ սարքվածքներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները հաստատելու մասին" որոշման մեջ բերված պահանջների և կանոնների համապատասխան:
2. Նշագծման տիպային համարը, ձևը, գույնը, չափերը և նշանակությունը, ինչպես նաև ներկի հետ լույս անդրադարձնող լրացուցիչ նյութերի օգտագործումը որոշում է պատվիրատուն:
3. Գծանշումներ կատարելիս՝ դրանց շեղումը նախագծային դրույթից չպետք է գերազանցի 5 սմ-ը:
4. Գծանշվող գծերի չափերի շեղումները չպետք է գերազանցեն՝
1) 1 սմ-ը՝ գծի լայնությամբ,
2) 5 սմ-ը՝ նրբագծերի և խղվածքների երկարությամբ:
5. Նոր գծապատկերով գծանշում կատարելու դեպքում հին գծանշումը չպետք է տեսանելի լինի:
6. Գծանշումը շահագործման պահից օրվա բոլոր ժամերին պետք է լավ տեսանելի լինի (ծածկի վրա ձյան բացակայության պայմանում):
7. Նշագծումը իրականացվում է նշագծման համար նախատեսված լաքաներկային նյութերով, որոնք պետք է ունենան 6 ամսից ոչ պակաս ծառայության ժամկետ և ապահովեն նշագծվող ճանապարհի բնութագրերին համապատասխան լուսանդրադարձման և

պայծառության գործակիցները: Այն դեպքում, երբ գշագծման շահագործման ժամկետում ի հայտ է գալիս, որ կապալառու կազմակերպությունը չի ապահովել նշված ծառայության ժամկետը, ապա կապալառու կազմակերպությունը պարտավոր է իր սեփական ֆինանսական և տեխնիկական միջոցներով իրականացնի նոր նշագծում՝ ապահովելով պահանջվող ծառայության ժամկետը:

2. Հայաստանի Հանրապետության պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը (2016 թ.-ի համար)

Մարզ, Տարածաշրջան	Միջպետական - I		Միջպետական - II-IV		Հանրապետական - II-IV		Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /	միավորի արժեքը	Ընդամենը գումարը (ՀՀ դրամ)
	Նշագծվող ճանապարհահատվածների երկարությունը /կմ/	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /	Նշագծվող ճանապարհահատվածների երկարությունը /կմ/	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /	Նշագծվող ճանապարհահատվածների երկարությունը /կմ/	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ/			
Գեղարքունիք	**15.7**		**181.3**		**50.1**		**28257.0**	**1150.0**	**32,495,550.0**
Գավառ			36.3	1996.5	5.0	275.0	**2271.5**	1150.0	2,612,225.0
Մարտունի			60.4	3322.0	0.0	0.0	**3322.0**	1150.0	3,820,300.0
Վարդենիս			37.4	2057.0	0.0	0.0	**2057.0**	1150.0	2,365,550.0
Ճամբարակ			15.3	841.5	45.1	2480.5	**3322.0**	1150.0	3,820,300.0
Սևան	15.7	14130.0	31.9	3154.5	0.0	0.0	**17284.5**	1150.0	19,877,175.0
Սյունիք	**0.0**		**336.0**		**17.7**		**36633.5**	**1150.0**	**42,128,525.0**
Գորիս			87.0	11565.0	17.7	973.5	**12538.5**	1150.0	14,419,275.0
Կապան			90.0	4950.0	0.0	0.0	**4950.0**	1150.0	5,692,500.0
Մեղրի			107.0	5885.0	0.0	0.0	**5885.0**	1150.0	6,767,750.0
Սիսիան			52.0	13260.0	0.0	0.0	**13260.0**	1150.0	15,249,000.0
Վայոց Ձոր	**0.0**		**108.3**		**40.1**		**23382.0**	**1150.0**	**26,889,300.0**
Եղեգնաձոր			75.3	12761.5	8.1	445.5	**13207.0**	1150.0	15,188,050.0
Վայք			33.0	8415.0	32.0	1760.0	**10175.0**	1150.0	11,701,250.0

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր օգտագործման
միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծման
ենթակա հատվածները

		Ծրագիր 2016թ.				
No	Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Սպասարկվող ճանապարհահատվածների ընդհանուր երկարությունը	Տեխնիկական կարգը	Նշագծվող ճանապարհահատվածների երկարությունը	1կմ-ում միջին նշագծման մակերեսը /քմ /	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /
	Գավառի տարածաշրջան					
1	Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ կմ12,7-կմ49,0	36,3կմ	II-IV	36.30	55	1996.5
2	Հ-39, Մ10-Գավառ-Մ10 կմ 0-կմ5,0	5,0 կմ	II-IV	5.00	55	275
	Ընդամենը			41.30		2271.5
	Միջպետական - II-IV			36.30		1996.5
	Հանրապետական - II-IV			5.00		275.0
	Մարտունու տարածաշրջան					
1	Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ կմ 49,0- կմ92.9	43.9կմ	II-IV	43.90	55	2414.5
2	Մ-11 Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ կմ0-կմ20,7	20,7կմ	II-IV	16.50	55	907.5
	Ընդամենը			60.40		3322.0

	Միջպետական - II-IV			60.40		3322.0
	Հանրապետական - II-IV			0.00		0.0
	Վարդենիսի տարածաշրջան					
1	Մ-11 Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ կմ20.7-կմ 56,2	35,5կմ	II-IV	35.50	55	1952.5
2	Մ-14 Մ-4-Շորժա-Վարդենիս կմ63.7-կմ97.8	34,1 կմ	II-IV	1.90	55	104.5
	Ընդամենը			37.40		2057.0
	Միջպետական - II-IV			37.40		2057.0
	Հանրապետական - II-IV			0.00		0.0
	Ճամբարակի տարածաշրջան					
1	Մ-14 Մ-4-Շորժա-Վարդենիս կմ 12,2-կմ 27,5	51,5 կմ	II-IV	15.30	55	841.5
2	Հ-30 Մ-4-Ճամբարակ-Դրախտիկ կմ10.1 -կմ55.2	45.1 կմ	II-IV	45.10	55	2480.5
	Ընդամենը			60.40		3322.0
	Միջպետական - II-IV			15.30		841.5
	Հանրապետական - II-IV			45.10		2480.5
	Սևանի տարածաշրջան					
1	Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադր.սահման կմ 51,2-կմ 73.9 և կմ 73.9-կմ 80,92	29,72 կմ	I	15.70	900	14130
			II-IV	7.00	255	1785
2	Մ10 Սևան-Մարտունի-Գետափ կմ0,0-կմ12,7	12.7	II-IV	12.70	55	698.5
3	Մ-14 Մ-4-Շորժա-Վարդենիս կմ0 -կմ 12,2	12.2կմ	II-IV	12.20	55	671
	Ընդամենը			47.60		17284.5
	Միջպետական - I			15.70		14130.0
	Միջպետական - II-IV			31.90		3154.5
	Հանրապետական - II-IV			0.00		0.0

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծման ենթակա հատվածները

		Ծրագիր 2016թ.				
No	Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Սպասարկվող ճանապարհա-հատվածների ընդհանուր երկարությունը	Տեխնիկական կարգը	Նշագծվող ճանապարհա-հատվածների երկարությունը	1կմ-ում միջին նշագծման մակերեսը /քմ /	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /
	Գորիսի տարածաշրջան					
1	Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ219.6-կմ253.5	33.9 կմ	II-IV	33,90	255	8644,5
2	Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ253.5-կմ278.1	24.6 կմ	II-IV	24,60	55	1353
3	Մ-12 Գորիս-ԼՂՀ սահման կմ 0 -կմ28.5	28.5կմ	II-IV	28,50	55	1567,5
4	Հ-46 Մ-2-Թաթև-Աղվանի-Կապան կմ 0-կմ 35.0	35.0 կմ	II-IV	17,70	55	973,5
	Ընդամենը			104,70		12538,5
	Միջպետական - II-IV			87,00		11565,0
	Հանրապետական - II-IV			17,70		973,5
	Կապանի տարածաշրջան					
1	Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 278.1-կմ327,3	49,2 կմ	II-IV	49,20	55	2706
4	Մ-17 Մ-2Կապան-Ծավ- Մ-2 կմ0.0-կմ40,8	40,8 կմ	II-IV	40,80	55	2244
	Ընդամենը			90,00		4950,0
	Միջպետական - II-IV			90,00		4950,0

	Հանրապետական - II-IV			0,00		0,0
	Մեղրու տարածաշրջան					
1	Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 327,3- կմ384.3	57,0 կմ	II-IV	57,00	55	3135
3	Մ-17 Մ-2 Կապան-Ծավ- Մ-2 կմ40,8-կմ90.8	50,0կմ	II-IV	50,00	55	2750
	Ընդամենը			107,00		5885,0
	Միջպետական - II-IV			107,00		5885,0
	Հանրապետական - II-IV			0,00		0,0
	Սիսիանի տարածաշրջան					
1	Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 167,6- կմ219.6	52,0 կմ	II-IV	52,00	255	13260
	Ընդամենը			52,00		13260,0
	Միջպետական - II-IV			52,00		13260,0
	Հանրապետական - II-IV			0,00		0,0

ՀՀ Վայոց Ձորի մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծման ենթակա հատվածները

		Ծրագիր 2016 թ.					
No	Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Սպասարկվող ճանապարհա-հատվածների ընդհանուր երկարությունը	Տեխնիկական կարգը	Սպասարկվող ճանապարհա-հատվածների երկարությունը	Նշագծվող ճանապարհա-հատվածների երկարությունը	1կմ-ում միջին նշագծման մակերեսը /քմ /	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /
	Եղեգնաձորի տարածաշրջան						
1	Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 91,5 -կմ 134,6	43,1 կմ	II-IV	43,10	43,10	255,00	10990,5
3	Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ կմ 106.3-կմ 125.1	32.2 կմ	II-IV	32,20	32,20	55,00	1771,0
3	Մոտեցում Նորավանքի հուշարձանին կմ 0-կմ8,1	8,1 կմ	II-IV	8,10	8,10	55,00	445,5
	Ընդամենը			106,60	83,40		13207,00
	Միջպետական - II-IV			43,10	75,30		12761,50
	Հանրապետական - II-IV			63,50	8,10		445,50
	Վայքի տարածաշրջան						
1	Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 134,6-կմ167,6	33,0 կմ	II-IV	33,00	33,00	255,00	8415,0
2	Հ-41,Մ2-Ջարիթափ-Նախիջևանի սահման կմ 0-կմ 26,6	26,6 կմ	II-IV	26,60	8,00	55,00	440,0
3	Հ-42, Մ2-Գնդեվազ-Ջերմուկ-Ադրբ,սահման կմ0-կմ 24,0	24,0կմ	II-IV	24,00	24,00	55,00	1320,0
	Ընդամենը			83,60	65,00		10175,0
	Միջպետական - II-IV			33,00	33,00		8415,0
	Հանրապետական - II-IV			50,60	32,00		1760,0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
Ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
ՀՎՀ 900011012136
ՀԿՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/ճ
ՀՎՀ 247020001654000
ՀԿՀՀ 09700228

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
«____» _____ 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-1
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«21» դեկտեմբեր 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՇԻԳ-16/1-1
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն